ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հունվարի 2015 թվականի N 182 - Ն

ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1515-Ն որոշման 19-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության, ինչպես նաև ոռոգման ոլորտի կազմակերպությունների կողմից շահագործվող մի շարք ջրային համակարգերի ամենամյա նորոգումների կատարման, ոռոգման համակարգում հրատապ լուծում պահանջող աշխատանքների իրականացման և ոռոգման սեզոնի արդյունավետ կազմակերպման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հաստատել ոռոգման համակարգերի հիմնանորոգման 2015 թվականի ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածում կատարել վերաբաշխում և Հայաս-

տանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշման NN 5 և 12 հավելվածներում կատարել փոփոխություններ ու լրացումներ՝ համաձայն NN 2, 3, 4 և 5 հավելվածների:

3. Սահմանել, որ սույն որոշման N 1 հավելվածի՝

1) 1-ին բաժնում նախատեսված գումարները Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին հատկացվում են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» և «Նախագծահետազոտական ծախսեր» հոդվածներով, որոնց գնումներն իրականացվելու են՝ կիրառելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով սահմանված բանակցային ընթացակարգը՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու.

2) 2-րդ բաժնում նախատեսված գումարները ջրօգտագործողների ընկերություններին հատկացվում են «Այլ կապիտալ դրամաշնորհներ» հոդվածով՝ հավելվածի 2-րդ բաժնով նախատեսված կազմակերպություններին համապատասխան պայմանագրերի հիման վրա նվիրաբերելու նպատակով.

3) 3-րդ բաժնում նախատեսված գումարը ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպություններին հատկացվում է «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով՝ նշված հավելվածի 3-րդ բաժնով նախատեսված կազմակերպություններին համապատասխան պայմանագրի հիման վրա նվիրաբերելու նպատակով:

4. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին՝

1) սույն որոշման N 1 կետով հաստատված ծրագրի ֆինանսավորումը կատարել համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերի կամ թերությունների տեղեկագրերի առկայության պայմաններում.

2) մինչև 2016 թվականի փետրվարի 1-ը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել սույն որոշման 1-ին կետով հաստատված ծրագրով կատարված աշխատանքների ֆինանսատնտեսական արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն՝ ջրօգտագործողների ընկերությունների ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների վրա ազդեցության տեսանկյունից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2015 թ. մարտի 3
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2015 թվականի
հունվարի 30-ի N 182 - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ

NN ը/կ	Օբյեկտը շահագործող կազմակերպության անվանումը	Օբյեկտի անվանումը	Կատարվելիք աշխատանքների համառոտ բնութագիրը	Ընդամենը՝ գումարի չափը	այդ թվում՝		Ակնկալվող արդյունքը
				(հազ. դրամ)	նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման, փորձաքննության և հեղինակային հսկողության արժեքը	տեխ. վերահսկման արժեքը	
	1. Ոռոգման համակարգերում հրատապ լուծում պահանջող աշխատանքներ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում և նախագծահետազոտական ծախսեր>> հոդվածներով), որոնք նախատեսվում է իրականացնել կիրառելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով սահմանված բանակցային ընթացակարգ՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու գնման ձևը						
1.1	<<Թալին>> ՋՕԸ	Շտրեկի պոմպակայանի վերանորոգում	պոմպակայանի մաշված էլ. և հիդրո-մեխանիկական սարքավորումների փոխարինում նոր սարքավորումներով	57,344.6	100.0	819.7	Կապահովի հու-սալի ջրամատակա-րարում:

1.2	<<Մերձափնյա>> ՋՕԸ	Հայկավան համայնքի Ρ-1 բաժանարարի վերանորոգում	Լ-450զծմ LR-80 տիպի կիսախողովակներով ջրանցքի վերանորոգում	34,802.0	1340.0	662.0	Կապահովի Հայկավան համայնքի 140 ջրօգտագործող-ների 75 հա հողերի ոռոգումը:
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ			**92,146.6**	**1,440.0**	**1,481.7**	
	2. Ոռոգման համակարգերում հրատապ լուծում պահանջող աշխատանքներ (<<Այլ կապիտալ դրամաշնորհներ>> հոդվածով)						
2.1	<<Խոյ>> ՋՕԸ	Աղավնատուն ջ/կ վերանորոգում	Աղավնատան ջ/կ գտվում է քայքայ-ված և վթարային վիճակում: Պոմպակայանի հողային հունով մոտեցնող ջրանցքը մեծ խոչընդոտ է առաջացնում շահագործման ժամանակ: Անհրաժեշտ է կառուցել նոր պոմպակայանի շենք ստորին Հրազդանի ջրանցքի մոտ և ավելացնել Դ-219մմ Լ -350 մ մետաղական խողովակաշարի տեղադրումը:	14,500.0	560.0	268.0	Կապահովի Աղավնատուն համայնքի 50 հա հողերի ոռոգումը:
		1 հատ խորքային հորի վերականգնում	Հովտամեջ համայնքում մոտ 100 հա հողատարածքներ ոռոգվել են խորքային հորով և ներտնտեսային ջրանցքով: Այժմ խորքային հորը ցամաքել է, ուստի անհրաժեշտ է վերականգնել 1 հատ խորքային հոր, ձեռք բերել և տեղադրել ԷՑՎ -12-160-65 խորքային պոմպ:	10,756.4	413.7	113.6	Կապահովի Հովտամեջ համայնքի 60 ջրօգտագործող-ների 35 հա հողերի ոռոգումը:

		1 հատ խորքային հորերի վերականգնում	Սամաղար համայնքում ոռոգման ջուրն անցնում է տնամերձ հողատա-ռածքներով և համայնքի վարչական տարածքով, որն առաջացնում է մեծ դժվարություններ և ջրի մեծ կորուստ-ներ ջրի տեղափոխման ժամանակ: Ուստի անհրաժեշտ է Սամաղար համայնքում վերականգնել 1 հատ խորքային հոր, ձեռք բերել և տեղադրել ԷՑՎ -12-160-65 խորքային պոմպ	12,972.5	500.0	155.4	Կապահովի Սամաղար համայնքի 55 ջրօգտագործող-ների 35 հա հողերի ոռոգումը:
		14 հատ խորքային պոմպերի ձեռքբերում և տեղադրում	14 հատ ԷՑՎ -12-160-65 խորքային պոմպերի ձեռքբերում և տեղադրում	36,000.0	1680.0	600.0	Կապահովի հուսալի ջրամա-տակարարում:
		պոմպակայաններում մոնիթորինգի համակարգի տեղադրում	չափիչ սարքավորումներով կահավորում և SCADA տվյալների մոնիթորինգի համակարգի ներդրում	1,907.4		37.4	Կապահովի հուսալի ջրա-մատակարարում, էլ. էներգիայի տնտեսում և հաշվարկման մակարդակի բարձրացում:
2.2	<<Մուսալեռ>> ՀՕԸ	խորքային հորի վերականգնում	Զվարթնոց համայնքի N 5 խորքային հորի վերականգնում, ԷՑՎ -12-225-30 խորքային պոմպի ձեռքբերում և տեղադրում	10,335.4	400.0	85.8	Կապահովի Զվարթնոց համայնքի 17 ջրօգտագործող-ների 27 հա հողերի ոռոգումը:
		խորքային հորի վերականգնում	Զվարթնոց համայնքի N 7 խորքային հորի վերականգնում, ԷՑՎ -12-225-30 խորքային պոմպի ձեռքբերում և տեղադրում	10,190.6	400.0	82.9	Կապահովի Զվարթնոց համայնքի 42 ջրօգտագործող-ների 38 հա հողերի ոռոգումը:

		խորքային հորի վերականգնում	Զվարթնոց համայնքի N 8 խորքային հորի վերականգնում, ԷՑՎ -12-225-30 խորքային պոմպի ձեռքբերում և տեղադրում	8,516.4	330.0	75.0	Կապահովի Զվարթնոց համայնքի 45 ջրօգտագործող-ների 39 հա հողերի ոռոգումը:
2.3	<<Շենիկ>>ՋՕԸ	Ղարա-Ջալա-2 պոմպակայանի վերանորոգում	22 ՆԴՍ պոմպային ագրեգատի ձեռքբերում և տեղադրում	10,000.0		200.0	Կապահովի հու-սալի ջրամատա-կարարում:
		Մյասնիկյան համայնքի <<N 3 դատարան>> խորքային հորատանցքի վերականգնում	պոմպային սարքավորման, կառավարման վահանակի, մալուխի, խողովակների ձեռք-բերում և տեղադրում	5,826.7	251.2	71.0	Կապահովի Մյասնիկյան համայնքի 15 հա հողերի ոռոգումը:
		Մյասնիկյան համայնքի շահագործման ընդունման ենթակա <<Ծիրանանոց>> խորքային հորատանցքի վերականգնում	պոմպային սարքավորման, կառավարման վահանակի, մալուխի, խողովակների ձեռքբերում և տեղադրում, հորատանցքի մաքրում	12,125.9	523.8	189.2	Կապահովի Մյասնիկյան համայնքի 25 հա հողերի ոռոգումը:
		Արտամետ համայնքի շահագործման ընդունման ենթակա <<N 3 Ջիվան>> խորքային հորատանցքի վերանորոգում	պոմպային սարքավորման ձեռք-բերում և տեղադրում	3,763.6	162.2	17.3	Կապահովի Արտամետ համայնքի 53 հա հողերի ոռոգումը:
		Արտամետ համայնքի շահագործման ընդունման ենթակա <<N 4 ֆերմա>> խորքային հորատանցքի վերականգնում	պոմպային սարքավորման, տրանս-ֆորմատորային ենթակայանի, կառա-վարման վահանակի, մալուխի, խողովակների ձեռքբերում և տեղադրում, հորատանցքի մաքրում	17,155.0	740.7	232.6	Կապահովի Արտամետ համայնքի 35 հա հողերի ոռոգումը:
		Տալվորիկ համայնքի շահագործման ընդունման ենթակա <<N 5>> խորքային հորատանցքի վերականգնում	պոմպային սարքավորման, տրանսֆորմատորային ենթակայանի, կառավարման վահանակի, մալուխի, խողովակների ձեռքբերում և տեղադրում, հորատանցքի մաքրում	15,914.4	687.1	209.4	Կապահովի Տալվորիկ համայնքի 50 հա հողերի ոռոգումը:

2.4	<<Սևջուր>>ՋՕԸ	1 հատ խորքային հորի վերականգնում	1 հատ խորքային հորի վերա-կանգնում Վարդանաշեն համայնքում R-8 բաժանարարի վրա, ԷՑՎ -12-160-45 խորքային պոմպի ձեռքբերում և տեղադրում	10,952.7	421.0	168.9	Կապահովի Վարդանաշեն համայնքի 60 հա հողերի ոռոգումը:
		1 հատ խորքային հորի վերականգնում	1 հատ խորքային հորի վերա-կանգնում Եղեգնուտ համայնքում, ԷՑՎ -12-160-45 խորքային պոմպի ձեռքբերում և տեղադրում	13,910.0	535.0	176.8	Կապահովի Եղեգնուտ համայնքի 65 հա հողերի ոռոգումը:
		1 հատ խորքային հորի վերականգնում	1 հատ խորքային հորի վերա-կանգնում Եղեգնուտ համայնքում (ակադեմիա), ԷՑՎ -12-160-45 խորքային պոմպի ձեռքբերում և տեղադրում	8,554.7	329.0	75.8	Կապահովի Եղեգնուտ համայնքի 30 հա հողերի ոռոգումը:
		Զարթոնք-Եղեգնուտ խորքային հորի վերականգնում	Զարթոնք-Եղեգնուտ ճանապարհի ձախ մասում <<Տիկոյի ծառ>> խորքային հորի վերականգնում, ԷՑՎ -12-160-45 խորքային պոմպի ձեռքբերում և տեղադրում	12,903.3		217.7	Կապահովի Եղեգնուտ համայնքի 35 հա հողերի ոռոգումը:
		Երասխահուն խորքային հորի վերականգնում	Երասխահուն համայնքի <<Ավոյի հոր>> խորքային հորի վերա-կանգնում, ԷՑՎ -12-160-45 խորքային պոմպի ձեռքբերում և տեղադրում	12,456.7		163.4	Կապահովի Երասխահուն համայնքի 35 հա հողերի ոռոգումը:
2.5	<<Վաղարշա-պատ>> ՋՕԸ	Նորակերտ համայնքի ոռոգման ջրատարի վերանորոգում	Նորակերտ համայնքի ոռոգման Դ=530մմ Լ=850 գծմ ջրագծի վերանորոգում մետաղական խողովակներով	13,005.0		255.0	Կապահովի Նորակերտ հա-մայնքի 300 ջրօգտա-գործողների 200 հա հողերի ոռոգումը:
2.6	<<Արմավիր>> ՋՕԸ	Մայիսյան խորքային հորի վերականգնում	Մայիսյան համայնքի խորքային հորի վերականգնում, ԷՑՎ -12-160-65 խորքային պոմպի ձեռքբերում և տեղադրում	12,267.3		134.8	Կապահովի Մայիսյան համայնքի 35 հա հողերի ոռոգումը:

2.7	<<Ակնալիճ>> ՋՕԸ	Տարոնիկ խորքային հորի վերականգնում	Տարոնիկ համայնքից 600 մ հեռավորության վրա <<N 815 պայմանական անվանում>> խորքային հորի վերականգնում, ԷՑՎ -12-160-65 խորքային պոմպի ձեռքբերում և տեղադրում	11,726.3		124.8	Կապահովի Տարոնիկ համայնքի 35 հա հողերի ոռոգումը:
2.8	<<Արաքս>> ՋՕԸ	պոմպակայաններում մոնիթորինգի համակարգի տեղադրում	չափիչ սարքավորումներով կահավորում և SCADA տվյալների մոնիթորինգի համակարգի ներդրում	2,774.4		54.4	Կապահովի հուսալի ջրամա-տակարարում, էլ. էներգիայի տնտեսում և հաշվարկման մակարդակի բարձրացում:
2.9	<<Մերձափնյա>> ՋՕԸ	Հայկավան համայնքի <<Բամբակաշատ ճանա-պարհ>> խորքային հորա-տանցքի վերականգնում	պոմպային սարքավորման, տրանս-ֆորմատորային ենթակայանի, կա-ռավարման վահանակի, մալուխի, խողովակների ձեռքբերում և տեղադրում, հորատանցքի մաքրում	8,474.0	365.5	72.6	Կապահովի Հայկավան համայնքի 30 հա հողերի ոռոգումը:
		Արևիկ համայնքի <<Վարիկի>> խորքային հորատանցքի վերականգնում	պոմպային սարքավորման, տրանս-ֆորմատորային ենթակայանի, կառավարման վահանակի, մալուխի, խողովակների ձեռք-բերում և տեղադրում, հորատանցքի մաքրում	8,381.6	361.8	63.4	Կապահովի Արևիկ համայնքի 25 հա հողերի ոռոգումը:
		Տանձուտ համայնքի <<Կարմիր խաչ>> խորքային հորատանցքի վերականգնում	պոմպային սարքավորման, տրանսֆորմատորային ենթակայանի, կառավարման վահանակի, մալուխի, խողովակների ձեռքբերում և տեղադրում	8,387.5	361.8	69.3	Կապահովի Տանձուտ համայնքի 30 հա հողերի ոռոգումը:

2.10	<<Ազատ>> ՋՕԸ	Արտաշատի հեռացնող ջրանցքի N 36 բաժանարարի ճյուղավորում	N 36 բաժանարարն սպասարկում է Արևշատ համայնքի տնամերձերի 60 տոկոսը: Բաժանարարի նոր ճյուղավորման Դ-400 մմ Լ-400 գծմ երկարությամբ խողովակաշարի կառուցման դեպքում կոռոզվեն մնացած հատվածները:	7,000.0	280.0	138.0	Կապահովի Արևշատ համայնքի 38 հա հողատարածք-ների ոռոգումը:
		Դալար և Ազատավան համայնքների խ/պ ձեռքբերում և տեղադրում	Դալար-1 հատ և Ազատավան-1 հատ համայնքների խ/պ ձեռքբերում և տեղադրում	5,000.0	200.0	80.0	Կապահովի Դալարի և Ազատավան համայնքների 60 հա հողատարածք-ների ոռոգումը:
2.11	<<Արարատ >> ՋՕԸ	<<Արազափ-1>> և <<Խոր-Վիրապ>> պոմպակայանների վերանորոգում	պոմպակայանների էլ. և հիդրոմեխ. սարքավորումների 1 հատ Դ1600/90 պոմպի, և 1 հատ էլ/շարժիչի 800կվ. 1000 պ/րոպե 6կվտ ձեռքբերում և տեղադրում	16,640.0	640.0	330.0	Կապահովի Արմաշ և Երասխ համայնքների հուսալի ջրամա-տակարարում:
		պոմպակայաններում մոնիթորինգի համակարգի տեղադրում	չափիչ սարքավորումներով կահավորում և SCADA տվյալների մոնիթորինգի համակարգի ներդրում	9,644.1		189.1	Կապահովի հուսալի ջրամա-տակարարում, էլ. էներգիայի տնտեսում և հաշվարկման մակարդակի բարձրացում:
2.12	<<Արտաշատ>> ՋՕԸ	Վարդաշեն համայնքի փակ ջրագծի կառուցում	Վարդաշեն համայնքի փակ ջրագծի կառուցում Դ-160մմ Լ-630 գծմ երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով	9,500.0	380.0	186.0	Կապահովի Վարդաշեն համայնքի 50 ջրօգտագործող-ների 50 հա հողա-տարածքների ոռոգումը:

		Վ. Արտաշատ ջրանցքից փակ ջրագծի կառուցում և Դվին ջրանցքից սնվող պոմպակայանի մղման խողովակաշարի կառուցում	փակ ջրագծի կառուցում Դ-300մմ երկշերտ ծալքավոր խողովակներով Լ-2200 գծմ փակ ջրագծի կառուցում Դ-160 մմ պոլիէթիլենային խողովակներով Լ-430 գծմ	80,000.0	3000.0	1386.0	Կապահովի Վ.Արտաշատ և Նորաշեն համայնքների 80 հա հողա-տարածքների և Ներքին Դվին համայնքի 30 ջրօգտագործող-ների 25 հա ոռոգումը:
		4 հատ խորքային պոմպերի ձեռքբերում	2 հատ ԷՑՎ 12-160-65 և 2 հատ ԷՑՎ 12-160-100 խորքային պոմպերի ձեռքբերում	9,000.0			Կապահովի հու-սալի ջրամատա-կարարում:
		պոմպակայաններում մոնիթորինգի համա-կարգի տեղադրում	չափիչ սարքավորումներով կահավորում և SCADA տվյալների մոնիթորինգի համակարգի ներդրում	3,406.8		66.8	Կապահովի հուսալի ջրա-մատակարարում, էլ. էներգիայի տնտեսում և հաշվարկման մակարդակի բարձրացում:
2.13	<<Վեղի>> ՋՕԸ	Գոռավանի պոմպակայանի վերանորոգում	պոմպակայանի շենքի երկաթբետոնյա միջնապատի վերանորոգում	4,770.0		93.5	Կապահովի Գոռավանի պոմպակայանի անխափան շահագործումը:
		Սիսավանի պոմպակայանի վերանորոգում	Սիսավանի պոմպակայանի շենքի և լուսամուտների վերանորոգում	5,200.0		100.0	Կապահովի Սիսավանի պոմպակայանի անխափան շահագործումը:

		պոմպակայաններում մոնիթորինգի համակարգի տեղադրում	չափիչ սարքավորումներով կահավորում և SCADA տվյալների մոնիթորինգի համակարգի ներդրում	3,172.2		62.2	Կապահովի հուսալի ջրամա-տակարարում, էլ. էներգիայի տնտեսում և հաշվարկման մակարդակի բարձրացում:
2.14	<<Մասիս>> ՋՕԸ	<<Ծխախոտագործ>> ԱԸ ջ/կ-ի վերանորոգում	<<Նոր-Խարբերդի>> ջ/կ շենքի և տանիքի վերանորոգում <<Ծխախոտագործ>> ջ/կ շենքի և էլ. ու հիդրոմեխանիկական սարքավորումների վերանորոգում	3,238.0	124.0	61.0	Կապահովի Նոր Խարբերդի ամառանոցային թաղամասի 70 ջրօգտագործող-ների 6 հա հողատարածք-ների ոռոգումը:
		Նոր Խարբերդի <<Արագած-1>> ջ/կ և <<Արագած-2>> ջ/կ վերանորոգում	Նոր Խարբերդի <<Արագած-1>> ջ/կ Դ-104մմ Լ-160 գծմ երկարությամբ մղման խողովակաշարի վերա-նորոգում և <<Արագած-2>> ջ/կ շենքի և էլ. ու հիդրոմեխանիկական սարքա-վորումների վերանորոգում	6,334.0	253.4	122.0	Կապահովի Նոր Խարբերդի ամառանոցային թաղամասի 110 ջրօգտագործող-ների 11 հա հողատարածք-ների ոռոգումը:
		Նոր Խարբերդի <<Մյասնիկյանի անվան կահույքի ֆաբրիկա>> և <<Նուրբ բրդյա>> ջ/կ-երի վերանորոգում	Նոր Խարբերդի <<Մյասնիկյանի անվան կահույքի ֆաբրիկա>> ջ/կ Դ-104մմ Լ-500 գծմ երկարությամբ մղման խողովակաշարի <<Մյասնիկյանի անվան կահույքի ֆաբրիկա>> ջ/կ Դ-104 մմ Լ-500 գծմ երկարությամբ մղման խողովակաշարի վերանորոգում	11,000.0	440.0	210.0	Կապահովի Նոր Խարբերդի ամառանոցային թաղամասի 110 ջրօգտագոր-ծողների 9 հա հողատարածք-ների ոռոգումը:

		Նոր Խարբերդի <<19 մինչև 17 փողոցների >> և Դարակերտ համայնքի 3-րդ կարգի ջրանցքների վերանորոգում	Նոր Խարբերդի 14 մինչև 17 փողոցների ջրագծերի Դ-104-159մմ Լ-250 գծմ մղման խողովակաշարի վերանորոգում Դարակերտ համայնքի 3-րդ կարգի ջրանցքների քայքայված հատվածների ԼՌ-6 ե/բ վաքերի 204 գծմ վերանորոգում	8,100.0	324.0	158.0	Կապահովի Նոր Խարբերդի ամառանոցային թաղամասի և Դարակերտ համայնքի 350 ջրօգտագործող-ների 132 հա հողատարածք-ների ոռոգումը:
		Դարբնիկ համայնքում բացասական ճնշումով ինքնաշատրվանող հորերի վրա հորիզոնական պոմպի տեղադրում և Նորամարգ համայնքի ինքնաշա-տրվանող հորից մղման խողովակաշարի կառուցում	Դարբնիկ համայնքում 4 կվտ հզորությամբ հորիզոնական պոմպի տեղադրում Նորամարգ համայնքի ինքնա-շատրվանող հորից Դ-200 մմ Լ-450 գծմ պոլիէթիլենային խողովակից մղման խողովակաշարի կառուցում	8,900.0	356.0	174.0	Կապահովի Դարբնիկ և Դարակերտ համայնքի 185 ջրօգտագործող-ների 105 հա հողատարածք-ների ոռոգումը:
		Արբաթ համայնքի խոր-քային հորի մղման խողո-վակաշարի կառուցում	Արբաթ համայնքի խորքային հորի պոլիէթիլենային Դ150 մմ Լ-700 գծմ երկարությամբ մղման խողովակաշարի կառուցում	9,400.0	376.0	180.0	Կապահովի Արբաթ համայնքի 180 ջրօգտա-գործողների 60 հա հողատարածք-ների ոռոգումը:
2.15	<<Շամիրամ>> ՋՕԸ	Արուճի Ջ/Կ-ի վերանորոգում	պոմպը մաշված է, էլ.սարքավորումները պետք է փոխվեն, շենքի հիմնանորոգում	5,035.9		100.0	Կապահովի Արուճ համայնքի 90 ջրօգտագործող-ների 250 հա հողատարածք-ների ոռոգումը:
2.16	<<Փարպի>> ՋՕԸ	Ոսկևազի ջրագծի վերանորոգում	Դ-400 մմ Լ-50 գծմ մետաղական խողովակաշարի վերանորոգում	1,500.0		28.0	Կապահովի հուսալի ջրամա-տակարարում:

2.17	<<Ամբերդ>> ՋՕԸ	Բյուրականի ջրանցքի վերանորոգում (Սոփանիս առու)	Հողային հունով ջրանցք, որն անցնում է ձորի լանջով ժայռային և կիսաժայռային ապառների միջով և ունի 50-60 տոկոս ֆիլտրացա: Անհրաժեշտ է վերականգնել մոտ L-250գծմ երկարությամբ բետոնով:	4,990.0		96.0	Կապահովի Բյուրական համայնքի 150 ջրօգտագործողների 200 հա հողատարածքների ոռոգումը:
2.18	<<Թալին>> ՋՕԸ	Թալին N 1, Սարալանջ N 7 առաջին աստիճան, Արեգ N 7 երկրորդ աստիճան, Դաշտադեմ, Գետափ, Անի և Արագած-1;2 պոմպակայանների նորոգում	պոմպակայաններում ֆիզիկապես և բարոյապես մաշված էլ. և հիդրոմեխանիկական սարքավորումների, կոմպենսատորների վերանորոգում	27,200.0		320.0	Կապահովի Արգինա, Արագած, Արեգ, Թալին, Աշնակ, Գետափ և Անի Պեմզա համայնքների 1207 ջրօգտագործողների 2485 հա հողերի ոռոգումը:
		Կաքավաձոր համայնքի ջրամբարի ջրթող փականի վերանորոգում	Կաքավաձոր համայնքի ջրամբարի ջրթող փականի Դ-800մմ չի գործում, այն ջարդվել է և պիտանի չէ շահագործման, հարկավոր է նորի տեղադրում:	1,200.0		24.0	Կապահովի հուսալի ջրամատակարարում:
		պոմպակայաններում մոնիթորինգի համակարգի տեղադրում	չափիչ սարքավորումներով կահավորում և SCADA տվյալների մոնիթորինգի համակարգի ներդրում	5,028.6		98.6	Կապահովի հուսալի ջրամատակարարում, էլ. էներգիայի տնտեսում և հաշվարման մակարդակի բարձրացում:
2.19	<<Աշտարակ>> ՋՕԸ	Մուղնի համայնքի ներտնտեսային ցանցի վերանորոգում	քայքայված Դ-273մմ L-400 գծմ մետաղական խողովակաշարի փոխարինում նորով	9,445.8		187.0	Կապահովի Մուղնի համայնքի 150 հա հողերի ոռոգումը:

2.20	<<Գետիկ>> ՋՕԸ	Ձրաշենի, Սպիտակի ձախ ափ և Հարթագյուղի պոմպակայանների վերանորոգում	էլ. և հիդրոմեխանիկական սարքավորումների, 250 կվտ և 320 կվտ շարժիչների, ՑՆՍ 400/210 պոմպերի վերանորոգում և ՍՊՍ 70/80 պոմպի ձեռքբերում	6,039.4		118.4	Կապահովի Սպիտակ համայնքի 45 հա, Ձրաշեն համայնքի 59 հա և Հարթագյուղ համայնքի 39 հա հողերի ոռոգումը:
		Կաթնաջրի դյուկեռի վերանորոգում	Անհրաժեշտ է վերանորոգել d= 400մմ L= 80գծմ դյուկեռի քայքայված մետաղական խողովակաշարը:	2,500.0		50.0	Կապահովի Կաթնաջրի համայնքի 50 հա հողերի ոռոգումը:
2.21	<<Լոռու ջրանցք>> ՋՕԸ	4 հատ պոմպակայանների վերանորոգում	Ճոճկան N 1.2, Այրում-ՃոճկանN 1 և Շնողի պոմպակայանների էլ. և հիդրոմեխանիկական սարքավորումների վերանորոգում, կարգաբերում	8,000.0		160.0	Կապահովի Ճոճկան, Այրում, Շնող համայնքների 476 ջրօգտագործողների 1302 հա հողերի ոռոգումը:
2.22	<<Մարտունի>> ՋՕԸ	Երանոսի, Վ.Գետաշենի,Աստղաձորի, Ձթրագյուղի և Ծովինարի պ/կայանների վերանորոգում	պոմպակայանների էլ. և հիդրոմեխանիկական սարքավորումների վերանորոգում	19,525.2		388.0	Կապահովի Երանոսի, Վ.Գետաշեն, Մարտունի, Ձոլաքար և Ծովինարի համայնքների 4930 ջրօգտագործողների 1264 հա հողերի ոռոգումը:

		Մանասի առու ջրանցքի վերանորոգում	ջրանցքի հողային հատվածի վերականգնում Դ-530մմ մետաղական խողովակաշարով	21,000.0		360.0	Կապահովի ջրանցքի իշխման տակ գտվող Վաղաշեն և Մարտունի համայնքների 3587 ջրօգտագործողների 500 հա հողերի ոռոգումը:
		պոմպակայաններում մոնիթորինգի համակարգի տեղադրում	չափիչ սարքավորումներով կահավորում և SCADA տվյալների մոնիթորինգի համակարգի ներդրում	9,195.3		180.3	Կապահովի հուսալի ջրամատակարարում, էլ. էներգիայի տնտեսում և հաշվարման մակարդակի բարձրացում:
2.23	<<Ձրվեժ-Զորաղբյուր>> ՁՕԸ	Ռ-IV բաժանարարի վերանորոգում	Դ-100մմ Լ-1500 գծմ մետաղական խողովակաշարի տեղադրում	7,000.0		138.0	Կապահովի Ձրվեժ և Զորաղբյուրի ամառանոցների 20 հա հողերի ոռոգումը:
		Կոտայքի ջրանցքի գլխամասային թունելի վերանորոգում	թունելի Դ-1,6 մ տրամաչափի մետաղական խողովակի վթարային հատվածների վերանորոգում	6,500.0		128.0	Կապահովի հուսալի ջրամատակարարում:
		Զորաղբյուրի Ռ-2 բաժանարարի և Պտղնիի 2 ոռոգման ցանցի վերանորոգում	Զորաղբյուրի Ռ-2 բաժանարարի Դ-150մմ Լ-300 գծմ խողովակաշարի տեղադրում և Պտղնիի 2 ոռոգման ցանցի վերանորոգում	3,000.0		110.0	Կապահովի Զորաղբյուր համայնքի և Նուռնուսի այգեգործական տարածքի 864 ջրօգտագործողների 57,6 հա հողերի ոռոգումը:

		Զովքի 2ջ/կ-ի, Կամարիսի խ/հ-ի և Զրաբերի ջ/կ-ի էլ.շարժիչների փոխարինում	Զովքի 2ջ/կ-ի, Կամարիսի խ/հ-ի և Զրաբերի ջ/կ-ի էլ.շարժիչների փոխարինում	7,480.0		144.0	Կապահովի հուսալի ջրամա-տակարարում:
		Զորաղբյուրի և Զովքի խորքային հորերի վերանորոգում	վթարված 2 հատ ԷՑՎ 10-63-150 պոմպերի փոխարինում նորերով	6,100.0		120.0	Կապահովի Զորաղբյուր, Զրվեժ և Զովք համայնքների 355 ջրօգտա-գործողների 55 հա հողերի ոռոգումը:
		պոմպակայաններում մոնիթորինգի համակարգի տեղադրում	չափիչ սարքավորումներով կահավորում և SCADA տվյալների մոնիթորինգի համակարգի ներդրում	2,080.8		40.8	Կապահովի հուսալի ջրա-մատակարարում, էլ. էներգիայի տնտեսում և հաշվարկման մակարդակի բարձրացում:
2.24	<<Եղվարդ>> ՋՕԸ	Եղվարդի գյուղամիջյան բաժանարար և Մրգաշենի MY-4	քայքայված 1800 գծմ երկարությամբ բաժանարարների առանձին հատվածների Լ-300գծմ վերանորոգում մոնոլիտ բետոնով և մետաղական խողովակներով	5,700.0		110.0	Կապահովի Եղվարդ հա-մայնքի 727 ջրօգտագոր-ծողների 41,5 հա և Մրգաշեն համայնքի 143 ջրօգտագործող-ների 167,8 հա հողերի ոռոգումը:

		Քանաքեռավանի ՄՀ-1 բաժանարար	քայքայված 1500գծմ երկարությամբ բաժանարարի առանձին հատվածների Լ-300գծմ վերանորոգում մոնոլիտ բետոնով	4,600.0		90.0	Կապահովի Քանաքեռավան համայնքի 573 ջրօգտագործող-ների 452,2 հա հողերի ոռոգումը:
		Պռոշյանի ԲՀ-4 բաժանարարի վերանորոգում	ջրագծի քայքայված բետոնային առանձին հատվածների վերա-նորոգում մոնոլիտ բետոնով, ԼՌ-40 վաքերով և մետաղական կիսա-խողովակներով մոտ Լ-200 գծմ	5,400.0		106.0	Կապահովի Պռոշյան համայնքի 550 ջրօգտագործող-ների 82,65 հա հողերի ոռոգումը:
		Զովունու և Գետամեջի տնամերձեր, թաղամասեր	Դ100-300մմ Լ-320 գծմ հատվածի վերանորոգում մետաղական խողովակներով	5,000.0		96.0	Կապահովի Զո-վունի համայնքի 791 ջրօգտա-գործողների 80,2 հա Գետամեջ համայնքի 443 ջրօգտագոր-ծողների 66,4 հա հողերի ոռոգումը:
2.25	<<Նաիրի>> ՋՕԸ	Եղվարդի ներտնտեսային ցանցի վերանորոգում	բետոնային ջրանցքի Լ-1100 գծմ երկարությամբ քայքայված հատվածների հատակի և շեպերի բետոնացում	16,502.1		323.5	Կապահովի Եղվարդ հա-մայնքի 100 ջրօգտագոր-ծողների 100 հա հողերի ոռոգումը:
2.26	<<Եղեգնաձոր>> ՋՕԸ	Հերմոն-Ելփին ինքնահոս ջրատարի վերանորոգում	Հերմոն-Ելփին ինքնահոս ջրատարի մոտ 300գծմ հատվածն անցնում է ակտիվ կոռոզիոն գրունտներով, ինչի պատճառով խողովակները քայքայվել են, ուստի անհրաժեշտ է փոխել Դ-630մմ Լ-300 գծմ մետաղական խողովակները:	14,165.0		288.7	Կապահովի Ռինդ, Չիվա, Արենի, Խաչիկ և Ելփին համայնք-ների 800 հա հողերի ոռոգումը:

2.27	<<Որոտան>> ՋՕԸ	Քարահունջի ջրամբարի մոտեցնող ջրանցքի վերանորոգում	Քարահունջի ջրամբարի մոտեցնող ջրանցքի ՊԿ44+10 վերանորոգում	4,150.0		81.4	Կապահովի Գորիս, Խոտ և Քարահունջ համայնքներ 628 հա և 190 ջրօգտագոր-ծողների այգիների ոռոգումը:
2.28	<<Մեղրի>> ՋՕԸ	16 հատ պոմպակայան-ների և 2 հատ խորքային հորերի վերանորոգում	Արաքս-1,2, Կարճևան-1, Մեղրի-1,2,3, Ալվանք-1,2, Ալվանք1-1, Շվանիձոր-1,2, Շահաձոր 1,Նյուվադի 1,2,3, Բուղդադուզի պ/կայանների, Ագարակի խ/հ, Ալվանքի խ/հ էլ. և հիդրոմեխանիկական սարքա-վորումների վերանորոգում	30,000.0		500.0	Կապահովի Նոնաձոր, Շվա-նիձոր, Ալվանք, Մեղրի և Ագա-րակ համայնք-ների 441 հա և 1060 ջրօգտա-գործողների ոռոգումը:
		Արաքս 1 և Կարճևան պոմպակայանների վերանորոգում	2 հատ ՑՆ 1000-180 պոմպերի ձեռքբերում և տեղադրում	5,000.0		98.0	Կապահովի Արաքս համայնքի 60 հա և Կարճևան համայնքի 15 հա հողերի ոռոգումը:
		Կարճևան թիվ 1 պոմպակայանի վերանորոգում	Դ-273մմ Լ-150գծմ քայքայված խողովակաշարի փոխարինում	2,500.0		48.0	Կապահովի Կարճևան համայնքի 15 հա հողերի ոռոգումը:
2.29	<<Սիսիան>> ՋՕԸ	Բռնակոթի ոռոգման ցանցի վերականգնում	Բռնակոթի ոռոգման ցանցի Դ-100 - 325 մմ Լ-2500 գծմ երկարությամբ խողովակաշարի վերականգնում	15,000.0		294.0	Կապահովի Բռնակոթի համայնքի 270 հա և 300 ջրօգտա-գործողների ոռոգումը:

		Լծենի ոռոգման ցանցի վերանորոգում	ջրագծի Դ-150մմ Լ-600մ մետաղական խողովակաշարի վերանորոգում	5,000.0		100.0	Կապահովի Լծեն համայնքի 14.4 հա և 62 ջրօգտագործողների ոռոգումը:
2.30	<<Նոյեմբերյան>> ՋՕԸ	8 հատ պոմպակայանի վերանորոգում	Լալվարի N 1, Արճիս-Շնողի N 1, Լճկաձորի, Հաղթանակի N 1, Ջեյթուն-Հաղթանակի N 2, Պտղավանի N 2, Դովեղի և Բազմաստիճան N 4 պոմպակայանների էլ.և հիդրոմեխանիկական սարքավորումների վերանորոգում, կարգաբերում	26,000.0		500.0	Զորական, Բերդավան, Պտղավան, Դովեղ, Հաղթանակ, Դեբեդավան, Արճիս, Շնող Դեղձավան համայնքների 1000 հա ոռոգումը:
		պոմպակայաններում մոնիթորինգի համակարգի տեղադրում	չափիչ սարքավորումներով կահավորում և SCADA տվյալների մոնիթորինգի համակարգի ներդրում	10,291.8		201.8	Կապահովի հուսալի ջրամատակարարում, էլ. էներգիայի տնտեսում և հաշվարկման մակարդակի բարձրացում:
2.31	<<Երևան>> ՋՕԸ	Հին Դալմա ջրանցքի վերանորոգում	Հին Դալմա ջրանցքի Թումանյանի անվան այգու վթարված հատվածի Լ-100զծմ երկարությամբ վերանորոգում:	2,000.0		40.0	Կապահովի հուսալի ջրամատակարարում:
		Ներքին Չարբախի N 1 խորքային հորի վերանորոգում	Ներքին Չարբախի N 1 խորքային հորի վերանորոգում	2,000.0		98.0	Կապահովի Ներքին Չարբախի տնտեսության 40 հա ոռոգումը:

		Ծիծեռնակաբերդի պոմպակայանի վերանորոգում	Ծիծեռնակաբերդի պոմպակայանի բարձր լարման Լ-350գծմ էլ. սնուցման վերանորոգում	1,200.0		50.0	Կապահովի Հայոց ցեղասպանության թանգարանի 100 հա հողերի ոռոգումը:
2.32	<<ՈՒտիք> ՋՕԸ	Քարագլուխ –Պառավաքար ջրատարի սնուցող խողովակաշարի կառուցում	Քարագլուխ-Պառավաքար ինքնահոս ջրատարի վերանորոգում Դ=250մմ Լ=200 գծմ մետաղական խողովակաշարով	2,000.0		40.0	Կապահովի Ծաղկավան, Վարագավան և Պառավաքար համայնքների ջրապահովության բարձրացում:
		Վերին Կարմիր աղբյուրի ջրամատակարարման խողովակաշարի վերանորոգում	ջրագծի կառուցում Դ-100 մմ պոլիէթիլենային խողովակներով Լ-200գծմ	1,500.0		30.0	Կապահովի Վերին Կարմիր աղբյուրի համայնքի 25 հա ոռոգումը:
2.33	<<Իջևան> ՋՕԸ	Ակնաղբյուր-Լուսաձոր պոմպակայանի վերանորոգում	պոմպակայանի 320 կվտ էլ.շարժիչի վերանորոգում	1,000.0		18.0	Կապահովի Ակնաղբյուր և Լուսաձոր համայնքների 150 հա ոռոգումը:
		Բերքաբերի ջրանցքի վերանորոգում	Ջրանցքի 5.5 կմ երկարությամբ քայքայված ԼՌ-40 և ԼՌ-60 ե/բետոնյա վաքերի վերանորոգում	8,000.0		160.0	Կապահովի Բերքաբեր համայնքի 50 հա ոռոգումը:
2.34	<<Գավառ> ՋՕԸ	Գեղարքունիք N 2 և Լանջաղբյուր N 1 ջրամբարների վերանորոգում	Գեղարքունիք N 2 և Լանջաղբյուր N 1 ջրամբարներում հարամիների պատճառով տեղի են ունենում ջրի մեծ կորուստներ: Մինչև ոռոգման սեզոնը հարամիները պետք է վերանորոգվեն:	4,300.0		82.0	Կապահովի հուսալի ջրամատակարարում:

		Սարուխան համայնքի աջ ճյուղ ջրանցքի վերանորոգում	Սարուխան համայնքի աջ ճյուղ ջրանցքի վթարային հատվածների վերանորոգում	10,000.0		200.0	Կապահովի հուսալի ջրամա-տակարարում:
		պոմպակայաններում մոնիթորինգի համակարգի տեղադրում	չափիչ սարքավորումներով կահավորում և SCADA տվյալների մոնիթորինգի համակարգի ներդրում	6,660.6		130.6	Կապահովի հուսալի ջրա-մատակարարում, էլ. էներգիայի տնտեսում և հաշվարման մակարդակի բարձրացում:
2.35	<<Վարդենիս> ՋՕԸ	6 հատ խորքային հորի վերանորոգում	6 հատ ԷՑՎ 10-160-65-3հատ, ԷՑՎ-12-255-30-1հատ, ԷՑՎ 12-255-30-1հատ և ԷՑՎ 10-63-150-1 հատ խորքային պոմպերի վերանորոգում, Մեծ Մասրիկում՝ 3 հատ, Վարդենիսում՝ 1 հատ և Շատվանում՝ 2 հատ պոմպերի ձեռքբերում և տեղադրում	6,000.0		120.0	Կապահովի հուսալի ջրա-մատակարարում, Մեծ Մասրիկում 60 հա, Վար-դենիսում 20 հա, Շատվանում 30 հա համայնքների ոռոգումը:
2.36	<<Շիրակ> ՋՕԸ	Կառնուտի ջրամբարի և Շիրակի ջրանցքի 26-րդ բաժանարարի վերանորոգում	Կառնուտի ջրամբարի ոռոգման ջրի ներքին բացթողման փականի և հիդրո-տեխնիկական սարքավորումների վերանորոգում և Բ26 միջտնտեսային բաժանարարի ՊԿ 183+87 - ՊԿ193+38 քայքայված բետոնային հատվածների վերանորոգում	12,000.0		240.0	Կապահովի Ազատան համայնքին հուսալի ջրա-մատակարարում:
Ընդամենը՝ ՋՕԸ-ներ				**852,853.4**	**15,396.2**	**14,288.2**	
	3. Ոռոգման համակարգերում հրատապ լուծում պահանջող աշխատանքներ (<<Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին>> հոդվածով)						
3.1	<<Սևան-Հրազդանյան-ջրառ>> ՓԲԸ	Ձողազի ջրամբարի իրիգացիոն ջրատարի վերանորոգում	իրիգացիոն ջրատարի և փականի վերանորոգում	20,000.0		398.0	Կապահովի հուսալի ջրամա-տակարարում:

		Արզնի Շամիրամ ջրանցքի (Բազմաղբյուրի ակվեդուկի) վերանորոգում	Բազմաղբյուրի ակվեդուկի բետոնային հատվածների վերանորոգում	35,000.0	1421.0	680.0	Կապահովի հուսալի ջրամա-տակարարում:
Ընդամենը՝ ՓԲԸ-ներ				**55,000.0**	**1,421.0**	**1,078.0**	
ԸՆԴԱՄԵՆԸ ԸՍՏ ԾՐԱԳՐԻ				**1,000,000.0**	**18,257.2**	**16,847.9**	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԴ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2015 թվականի
հունվարի 30-ի N 182 - Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 1515 -Ն ՈՐՈՇՄԱՆ N 5 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազ. դրամ)

Բաժինը	Խումբը	Դասը	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և դրանք իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				առաջին եռամսյակ	առաջին կիսամյակ	ինն ամիս	տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԾԱԽՍԵՐ	0	0	0	0
			այդ թվում՝				
04			ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
			այդ թվում՝				
	02		Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն				
			այդ թվում՝				
		04	Ոռոգում				
			այդ թվում՝				
			05. Ոռոգման համակարգերի հիմնանորոգում				
			ՀՀ գյուղատնտեսության նախարա-ության ջրային տնտեսության պետական կոմիտե				
			- Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին	55,000.0	55,000.0	55,000.0	55,000.0
			- Այլ կապիտալ դրամաշնորհներ	139,560.0	469,853.4	646,853.4	852,853.4
			Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	(196,000.0)	(526,293.4)	(703,293.4)	(909,293.4)
			-Նախագծահետազոտական ծախսեր	1,440.0	1,440.0	1,440.0	1,440.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2015 թվականի
հունվարի 30-ի N 182 - Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 13 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ

(հազ. դրամ)

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման			Ծրագրի համարը	Ծրագրերի և կատարողների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)				
					ընդամենը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	այդ թվում՝			
բաժինը	խումբը	դասը				շենքերի և շինությունների շինարարություն	շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	նախագծահետազոտական, գեոդեզիաքարտեզագրական աշխատանքներ	ոչ ֆինանսական ակտիվների գծով այլ ծախսեր
				ԸՆԴԱՄԵՆԸ	(907,853.4)		(909,293.4)	1,440.0	
				այդ թվում՝					
				ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ	(907,853.4)		(909,293.4)	1,440.0	
				այդ թվում՝					
04	02	04	05	Ոռոգման համակարգերի հիմնանորոգում	(907,853.4)		(909,293.4)	1,440.0	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2015 թվականի
հունվարի 30-ի N 182 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ N 5 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 12 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազ. դրամ)

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման			Ծրագրի համարը	Ծրագրերի և կատարողների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (նվազեցումները նշված են փակագծերում)			
բաժինը	խումբը	դասը			առաջին եռամսյակ	առաջին կիսամյակ	ինն ամիս	տարի
				ԸՆԴԱՄԵՆԸ	(194,560.0)	(524,853.4)	(701,853.4)	(907,853.4)
				ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ	(194,560.0)	(524,853.4)	(701,853.4)	(907,853.4)
				այդ թվում՝				
04	02	04	05	Ոռոգման համակարգերի հիմնանորոգում	(194,560.0)	(524,853.4)	(701,853.4)	(907,853.4)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 5
ՀՀ կառավարության 2015 թվականի
հունվարի 30-ի N 182 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ N 12 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Միջանցիկ կոդը՝ ըստ CPV դասակարգ-ման	Անվանումը			Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)				
				գնման ձևը	չափի միավորը	միավորի գինը	քանակը	գումարը (հազ. դրամ)
	ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե							
	Բաժին N 04	**Խումբ N 02**	**Դաս N 04**	**Ոռոգում**				(907,853.4)
	2. Ոռոգման համակարգերի հիմնանորոգում							
	ՄԱՍ III. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ							
45231125/1	Ոռոգման աշխատանքներ			ԲԸ	դրամ	(1,000,000,000.0)	1	(1000,000.0)
45231125/1	Ոռոգման աշխատանքներ			ԲԸԱՀ	դրամ	90,706,600.0	1	90,706.6
71241200	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում			ԲԸԱՀ	դրամ	1,440,000.0	1	1,440.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ